



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

118696

July 5 - 1931



1931

ՏԵՂԵԿԱՆ ՄԱՍԱՆՑԻՒՅԹ

20 JUL 2010

Հայր. Մի. Անդրեասյան

Ի՞ՆՉ Ե ԱՅՐՈՒՄԸ

ԳԵՂՋՐԱՑ

1931

ՅԵՐԵՎԱՆ

11.02.2013

8696

ՏԵԽՆԻԿԱՆ ՄԱՍԱՆԵՐԻՆ

536

Ա-58

Հարս. Միջ. ԱՆԴՐԻԱԶՅՈՒՆ

Ա/

Ի՞՞Չ Ե ԱՅՐԱՒՄԸ

2043

14192-54



ՅԵՐԱՎԱՆ

ՊԵՏՉՐԱՏԻ ՑՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 6842 (բ)
ՀՐԱՄ. № 1837
ԹԱՏՎԵՐ 5059
ՏԻՐԱԺԸ 5000

Յերբ յերկու աարբեր մարմիններ իրար հետ
միանալով առաջացնում են մի կառ մի քանի նոր
մարմիններ, վորոնք իրենց հատկություններով
բացահայտութեն տարբերվում են առաջին յերկու
մարմինների ամեն մեկից, այսինքն՝ ինչպես քի-
միկոսներն են ասում՝ յերբ տեղի յե ունե-
նում «միացման ուժակցիա», այդ դեպքում հաճախ
ջերմություն և առաջանում, այսինքն՝ թե՛ սկզբ-
նական նյութերի, թե՛ նրանցից առաջացած նյու-
թե և թե՛ պահպատղ միջավայրի ջերմաստիճանը
բարձրանում է: Որինակ՝ կերոսինը, միանալով
ողի թթվածնի հետ, առաջացնում ե ածխաթթու-
գաղ և ջրի գոլորշի, վորոնց ջերմաստիճանը շատ
բարձր և թե՛ վերջրած կերոսինի և թե՛ ողի ջեր-
մաստիճանից միաժամանակ առաջացած ջերմու-
թյունից բարձրանում ե աստիճանաբար՝ վերցրած
կերոսինի և վառվող լապտերի շուրջը գտնվող
ողի ջերմաստիճանը: Մեր նկարագրած ուեակցիան
և նրա նման ուեակցիաները, վորոնց հետեանքով
ջերմություն ե առաջանում, կոչվում են «եքու-
տերմիական ուեակցիաներ»:

Սակայն, լինում են և այսպիսի միացման
ուեակցիաներ, վոր վոչ միայն ջերմություն չեն

առաջացնում, այլ ընէհակառակը՝ սպառում են ջերմություն, իսկ յեթե դրսից նրանց ընթանալու համար ջերմություն չմասակարարվի, նրանք վոչ կառաջանան և վոչ ել կընթանան : Այդպիսի ռեակցիաները «ենթոտերմիական» առունն են կրում, վորոնցից ե, որինակ՝ մեր կարբիդի գործարանի հնոցներում տեղի ունեցող ռեակցիան : Այսաեղ, կիրը միանալով ածուխի հետ, կալցիում-կարբիդ է առաջացնում, սակայն այդ ռեակցիան թե՛ առաջանում ե և թե՛ ընթանում՝ անդադար ելեքտրական եներգիա սպառելով և այն ել բավականին մեծ քանակությամբ : Ամեն մի տոնն կարբիդի համար, մեր Յերեվանի գործարանն սպառում է մոտ 4500 կիլովատ-ժամ եներգիա . իսկ ավելի կատարելագործված գործարանները՝ 20-25 տոկոս պակաս եներգիա յեն սպառում, բայց այնուամենայնիվ, մշտապես ու շարունակ եներգիա սպառում են . այլակես, առանց դրսից եներգիա սպառալու կարբիդի հնոցը մարվում է և արտադրությունը կանդ առնում :

Այդ է «ենդոտերմիական» ռեակցիաների եյտթյունը և առանձնահատկությունը : Մի անգամ այդ մասին հեշտապեկելուց հետո, մենք այլևս կանդ չենք առնի այդ կարբի ռեակցիաների վրա, վորովհետև նրանք չեն կարող դաշվել այրման յերեռոյթների շարքը : Կյանքում մենք «ալրում»

ենք անվանում միայն այն յերեռույթները, վորոնց ընթացքում մենք նկատում ենք ջերմության ու լույսի առաջացում . իսկ այդ յերեռոյթները տեղի յեն ունենում միայն եքզոտերմիական միացման ռեակցիաների դեպքում, այն ել վոչ ամեն անդամ : Կանգ առնենք այդ հանդամանքի վրա :

Ամեն որ մեր չուրջը տեղի յեն ունենում բարձրթիվ միացման ռեակցիաներ, վորոնց ընթացքում սակայն վո՛չ լույս և վո՛չ ել ջերմություն չենք նկատում, այդ պատճառով նրանց մենք «այրումն» առունն ել չենք տալիս : Որինակի համար, մեր և առհասարակ բոլոր կենդանիների չնչառությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ միացման ռեակցիա, վոր աներնդհատորեն, դիշեր ու ցերեկ տեղի յե ունենում : Մենք ծոռւմ ենք ոդ, վորի հինգ ծավալից մեկը թթվածին ե, և արտաշնչում ենք արդեն փչացած ոդը, վորի թթվածնի քանակը դդալիորեն պակաս ե, իսկ ածխաթթվի ու ջրի գործություն քանակն զգալիորեն ավելի բարձր է : Ոդի կազմի այդ փոփոխությունն առաջանում է այն միացման ռեակցիայից, վոր տեղի յե ունենում մեր արյան մեջ . ոդի թթվածինը միանում և մեր արյան վորոշ որդանական մասերի հետ և նրանց ածխածնի հետ առաջացնում է ածխաթթու գաղ, իսկ ջրածնի հետ՝ ջրի գոլորշի : Այդ ռեակցիայից անալայման ջերմություն է առաջանում, վորի

շնորհիվ ե, վոր մեր մարմինը շարունակ տաք ե
(մոտ 37 աստիճան Յելսիուսի), նույնիսկ ձմեռվա
ցուրտ որերին: Հենց վոր մարդը կամ անառունը
դադարում են շնչելուց, նրանք չուտով սառում են
ու կարկամում՝ նկարագրած միացման ռեակցիա-
յի կանդ առնելու հետևանքով:

Ֆրանսիացի հայտնի Քիմիկոս Լավուազիյին
դեռ տասնութերրորդ դարի վերջերում շնչառու-
թյունը վրորում ե վորպես «քանդաղ այրում»:

Իերենք մի որինակ ևս միացման ռեակցիայի,
վորի ընթացքում լույս չի առաջանում, իսկ ջեր-
մության առաջանալը նկատելու համար անհրա-
ժեշտ ե հատուկ միջոցների դիմել: Բաց ամանում
պահած գինին թթվում ե, այսինքն՝ նրա սպիր-
տը, միանալով ողի թթվածնի հետ, քացախ և
դառնում: Լավուազիյինի դործածած խոսքով,
մենք կարող ենք գինու թթվելն ել մկրտել «զան-
դաղ այրման» անունով, բայց մենք այրվել բա-
ռը գործ ենք ածում միայն այն գեղքում, յերբ
միացման ռեակցիան առաջացնում ե լույս և նկա-
տելի ջերմություն, ինչպես վոր այդ տեղի յե-
ռնենում նավթի, ցոխի, ածուխի և ուրիշ վա-
ռելանյութերի այրման դեպքում:

Մեր հիշատակած բոլոր որինակներն այնպես
եյինք ընտրել, վոր ամեն անդամ միացող նյութե-
րից մեկը թթվածինն եր հանդիսանում: հետա-
զայումն ել մենք կանդ ենք առնելու միմիայն այր-

ման այդ կարգի յերեսույթի վրա, սակայն
չպետք ե հետեւցնել, թի չեն կարող տեղի ունենալ
«այրման» ռեակցիաներ առանց թթվածնի մաս-
նակցության: Հայտնի յեն մի շարք այգափակի որի-
նակներ. մետաղներից շատերն այրվում են քլո-
րի մթնոլորտում, նատրիումի ռքսիդն այրվում
ե նույնիսկ ածխաթթու դաղի մթնոլորտում, սա-
կայն այդ բացառիկ յերեսույթների վրա մենք կանգ-
չենք առնի, վորովհետև նրանք առորյա կյանքում
չեն պատահում, իսկ տեխնիկայում առանձին հե-
տաքրքրություն չեն ներկայացնում ու զուրկ են
տնտեսական նշանակությունից:

Այրման/ռեակցիային սկիզբ դնելու համար,
հարկավոր ե առհասարակ ջերմություն հաղոր-
դել միանալիք նյութերից գոյնե մեկին. * Լուցկին
վառելու համար, դուք նրան շփում եք և շփու-
մից առաջացած ջերմությունն ե, վոր վառում և
լուցկին, վորից հետո լուցկու այրվելը շարունակ-
վում ե այն ջերմության շնորհիվ, վոր առաջա-
նում է միացման ռեակցիայից: Կերոսինի լամպը
վառելու համար դուք նրա պատրույգը տաքաց-
նում եք վառած լուցկով. կերոսինը ջերմությու-
նից գոլորշիանում ե ու խառնվելով տաք ողի հետ
բռնկվում ե ու վառվում, վորից հետո կերոսինի
վառվիլը շարունակվում է շնորհիվ առաջացող
ջերմության և կերոսինի անընդհատ դոլորշիաց-
ման:

Սենք վերը գործ ածեցինք քառհասարակ»
խոսքը՝ այրման ռեակցիայի սկզբելու մասին խո-
սելիս, վարովհետև կան դեպքեր (թեպետ այդ-
պիսի դեպքեր շատ ել հաճախ չեն հանդիպում
կյանքում), յերբ վորոշ մարմիններ վառվում են
իրենք իրենց, առանց նախորդք դրսից ջերմու-
թյուն ստանալու: Որինակ՝ Փոսֆորային ջրածին
անունով գաղը, յերբ նա անմաքուր է: Այն լույսը,
վոր յերբեմն գիշեր ժամանակ նկատվում է գե-
րեզմանների վրա, և վորը նախապաշտված մար-
դիկ համարում են այդ գերեզմաններում ամփոփ-
վածների «սրբության» ապացուց, վոչ այլ ինչ
է, յեթե վոչ անմաքուր Փոսֆորային ջրածին,
վորը քայլքայվող դիմկից առաջանալով, դուրս և
դավա գերեզմանից և ողի հետ խառնվելով վառ-
վում՝ առանց նախորդք առաքանալու կարիք ունե-
նալու: Նույնը կարելի յե ասել և քարածուխի դե-
գերի վառվելու մասին, վոր յերբեմն տեղի յե ու-
նենում, յեթե միջոցներ չեն ձեռք առնված այդ
գերերը քամահարելու: Սակայն, մենք կանգ չենք
առնի նաև այդ կարգի բացառիկ յերեռութների
վրա:

Առհասարակ այրման յերեռութը մենք դիտում
ենք ողում, սակայն, ողի միայն մի հինգերորդ
մասն և մասնակցում այդ պրոցեսին: Ողը բաշ-
կացած է գլխավորապես յերկու գաղից ըստ ծա-
վալի՝ նրա մի հինգերորդ մասը թթվածին է, չորս

հինգերորդը՝ աղոտ, չնչին քանակությամբ ուրիշ
գաղեր ել կան ողում, վորոնց վրա կանգ չենք առ-
նում: *)

ՎԱյրման պրոցեսին մասնակցում ե միայն թթվ-
ածինը, իսկ աղոտը, թթվածնի հետ խառը լի-
նելով, միայն տաքանում է, հետը տանելով ա-
ռաջացած ջերմության նշանավոր մասը: Այդ
պատճառով, բնականաբար այրման պրոցեսը մա-
քուր թթվածնի մթնոլորտում ավելի բուռն է ըն-
թանում, քան թե ողի մթնոլորտում: Այսիածնի
Կողի մեջ այրվելու յերեռութը ծանոթ է ամենքին.
Պրոցեսը վորոշ չափով աշխուժանում է, յերբ առ-
հեստական կերպով արագացնում էք ողի հոսան-
քը փուքսի կամ ուրիշ սարքավորման միջոցով.
այդ գեեցքում, այրված ածուխի մակերեսին գո-
յացած ածխաթթու գաղն անդադար հեռացնելով,
ողի հոսանքը շարունակ թարմ ող է մատակարա-
րում ածխի մակերեսին, միաժամանակ մաքրելով
այն՝ առաջացած մոխրից, վոր ծածկելով այր-
վող ածուխի մակերեսը, խանդարում է նրա միաց-
մանը թթվածնի հետ:

Շատ ավելի բուռն է ընթանում պրոցեսը, յե-
թե վասկած ածուխի կտորն ամրացնելով յերկա-
թե թելի ծայրին, մուծեք մաքուր թթվածնով լի-

*) Հետաքրքրվողները կդառնեն մեր «Ցիանամիդի ար-
տադրությունը» աշխատության մեջ:

քը ապակյա ոչնակի մեջ։ Ածուխը աշխուժորեն այրվում է, պայծառ, կուրացուցիչ լույս արձակելով։

Նույնիսկ յերկաթը, վորոդի մեջ չի վառվում, թթվածնութ իիքը ոչնակի մեջ վառվում է, պայծառ կայծերի կարկուտ թափելով շուրջը։ Յեթև ձեռքի տակ թթվածնով իիքը ոչնակ ունեք, մուծեք նրա մեջ յերկաթե թելի կամ պողպատե բարակ զսպանակի մի կտոր, ծայրին ամրացնելով վառած աճուիի փոքրիկ կտոր և տհա դուք կտեսնեք յերկաթի վառվելը։

Յերկաթի փոխարեն «մագնիում» անունով ձերմակ մետաղի նեղիկ ու բարակ ժապավենը վերցնելով՝ մենք ավելի պայծառ լույս կստանանք։ Մագնիումը մի անգամ վառվելուց հետո, ողումն ել արդեն շարունակ վառվում է շատ պայծառ, սոլիտար լույս արձակելով, վորով ողտվում են լուսանկարիչները՝ դիշեր ժամանակ լուսանկար ընկնու։ Թթվածնի մեջ, իհարկե, մագնիումն ավելի ևս պայծառ լույս է տալիս։ Սակայն վո՛չ յերկաթը, վո՛չ մագնիումը և վո՛չ նույնիսկ լավ ածխացած ածուիր բոց չեն առաջացնում, մինչդեռ կերոսինը, ձեթը, մոմը, ցախը և բոլոր տեսակի այրվող գաղերը վառվելիս բոց են անում։ Պարզենք դրա պատճառը։

Նեղիկ խողովակի ծայրի բարակ ճեղքից վոր-

են վառվելու ընդունակ դազի հոսանք բանալով ողի մեջ և վառելով այն՝ կստանանք բոց։ Յեթև հոսանքն ուժեղանում է, բոցը ձգվում, յերկարում է. հակառակ դեպքում՝ բոցը վորքը ստացված ացետիլեն դազի, ճահճային դազի, նավթի հորերից ստացվող դազի բոցը լուսավոր է, իսկ ջրածնի բոցն անդույն։ Լուսավոր բոցի մեջ վորեն սառը իր մուծելով, դուրս ենք հանում այն սկացած, իսկ ջրածնի բոցի մեջ սառն իրը չի սկանում։ Սառն իրի վրա նստած սկությունը, մուրը՝ ածուխ է. պարզ է, վոր հենց այդ ածուխն է լույս տալիս բոցին, շիկանալով նրա ջերմությունից, վորովհետև ջրածնի բոցը, վոր զուրկ և ածխածնից, լույս չի տալիս, մինչդեռ մյուս թված գաղերը բոլորն ել իրենց բաղադրության մեջ ածխածին ունեն, վոր մինչև այրվելը շիկանում է ու լույս արձակում մուրենու բոցը շիկացած գազ է. յեթե այդ գազի մեջ ներկա յին շիկացած պինդ նյութեր, բոցը լույս է արձակում, հակառակ դեպքում, չնայած իր բարձր ջերմաստիճանին, վառվում է անդույն, անլույս բոցով։ Նույն ջրածնի բոցը կարելի յեղարձնել լուսատու, յեթե նրա մեջ մուծենք վորեն պինդ մարմին, վոր առանց տարրալուծվելու, առանց հալվելու կամ գոլորշիանալու դիմանա նրա բարձր ջերմաստիճանին, որինակ՝ մի կտոր կիր, պլատինի (լմնուկու)

կտոր և այլ գրանց նման կրակի դիմացկուն մար-
մին։ Շիկացած կրկ լույսը հայտնի յէ Դրամնեղ-
յան լույս անունով, վոր մինչեւ կեքարական լույ-
սի տարածվելը ծառայում եր փարսոների լուսա-
վորության նպատակին։ Այդ նույն շիկացման վրա
յէ Հիմնված գաղի ու կերոսինի լապտերների բո-
ցերի մեջ կրակի դիմացկուն նյութերից հատուկ
հանցեր դնելը՝ պայծառ լույս ստանալու նպա-
տակով։ Յանցը շիկանում ե ու պայծառ, սղիսակ
լույս աբձակում։

Կան պինդ մարմիններ, վորոնք ջերմությու-
նից տարրալուծվելով զանազան այրվող գաղեր են
առաջացնում, ինչպես որինակ՝ մոմը, ցախը,
նույնպես բոց են անում վառվելիս։ Յեթե վառ-
վող մոմի կամ փայտի կտորնի բոցի կենտրոնական
մասը մուծենք վորեւե բարակ խողովակի մի ծայ-
րը, նրա մյուս ծայրից դուրս կդա չայրված
գաղ, վոր կարելի յէ վառել։ Խողովակի ծայրը
պետք ե մուծել բոցի անպայման ներսի մասը և
այնտեղից վերցնել դեռ չայրված գաղը։ Բոցի
դրսի, մակերեսային մասերում արդեն վառվում
են ջերմությունից առաջացած գաղերը, և, յեթե
այդ մակերեսային մասերից վերցնենք գաղը, նա
այլևս չի վառվի խողովակի մյուս ծայրին, վո-
րովհետեւ բաղկացած և ածխաթթվից ու ջրի գոլոր-
շութ, իսկ այս յերկու նյութն այրման պրցեսի

վերջնական արդյունքն են արդեն և այլևս ընդու-
նակ չեն վառվելու։

Բոցը, լինի նու գաղային, թէ պինդ վառելա-
նյութի այրվելուց առաջացած, յերեք տարրեր
գոտիների յէ բաժանվում։

Առաջին՝ ներսի, կենտրոնական մասն այրվե-
լիք գաղի, կամ պինդ վառելանյութի գոլորշիների
ու նրանց քիմիական քայլայման արդյունքների
գոտին ե, վորն առաջանում ե իրեն ըջապատող
մյուս յերկու գոտիների ջերմությունից։ Յերկ-
րորդ գոտում, վոր ըջապատում ե առաջինը,
սկիզբն ե առնում միացման ռեակցիան, այսինքն՝
այրումը. այդտեղ այրվելիք գաղի կամ գոլորշու-
մանիկները, հանդիպելով դրսից մոտեցող ողի
թթվածնի մասնիկներին, միանում են նրանց հետ,
և յեթե դուդի կամ գոլորշու բաղադրության մեջ
ներկա յէ ածխածինը, նրա մասնիկները շիկանում
են, վորից առաջանում ե լույս, իսկ յեթե ած-
խածին չկա, ինչպես որինակ՝ ջրածին գաղի այր-
վելու դեպքում, բոցը զուրկ ե մնում լույսից։
Յերրորդ՝ արտաքին գոտին, վորը դրսի ողի չի-
կացած շերտն ե, և վորի մեջ վերջանում ե յերկ-
րորդ գոտում ոկիզր առած այրման պրոցեսը։ Այդ
գոտին կոչվում ե թթվացման գոտի, վորովհետեւ
որա մէջ ներկա յէ շիկացած թթվածինը, վոր
թթվացնում կամ այրում ե վերջնականապես վա-
ռելանյութի այն մասը, վոր յերկրորդ գոտում

չի այլվել. այստեղ ե վերջնականապես այլվում
յերկրորդ գոտում շիկացած ածխածինը, յեթե ողի
հոսանքը բավական ե ամբողջ ածխածինն այլելու
համար: Հակառակ դեսպում, յերբ ողի քանակը
պակաս ե, բոցը մխում ե, այսինքն՝ չայրված ած-
խածնի մասնիկները տարածվում են ըրջակա ողի
մեջ այրման պրոցեսի արդյունք հանդիսացող դո-
գերի հետ միասին: Այդ է պատճառը, վոր կերպուի-
նի լամպը մխում ե, յեթե նրա բոցը բավականա-
չափ քանակությամբ ող չի ստանում. ողի հոսան-
քըն ուժեղացնելու նպատակով ե, վոր մենք նրա
բոցը ըրջապատում ենք ապակյա խողովակով.
Վերջնիս ներքել մասից մտնում ե սառն ողը, իսկ
վերի մասից զուրու են զալիս այրման պրոցեսի
արդյունքները և ողի չայրվող մասը, այսինքն՝
աղոտը: Այդ հոսանքի շնորհիվ բոցը բավականա-
չափ ող ե ստանում և այլևս չի մխում, վորով-
հետեւ այլևս չայրված ածխածին չի մնում. նրա
բոլոր մասնիկներն այրվում են:

Իսկ պինդ, չտարբալուծվող ու չփոլորչիա-
ցող վառելանյութերի այրումը տեղի յե ունե-
նում միայն այդ նյութերի մակերեսին, վորտեղ
ողի թթվածինը միանում ե վառելանյութի մա-
կերեսային մասնիկների հետ: Պարզ ե, վոր այդ
դեպքում բոց չի կարող առաջանալ: Վառվող
քարածութից կամ փայտի ածութից առաջացած
բոցի պատճառն այն ե, վոր այդ վառելանյութե-

րը մաքուր ածխածնից չեն բաղկացած, թեպետ
և նրանց ամենամեծ մասն ածխածնից ե: Նրանք
որդանական նյութեր են, վորոնց տարբալուծու-
մըն իր վախճանին չի հասել և գեռ պարունա-
կում են ջրածին, թթվածին, իսկ քարածութիւնը՝
նույնպես և ծծումք: Լավ այրած ածուխը, վորի
մեջ այլևս ջրածին չի մնացել, արդեն բոց չի
անում. այդ կարելի յե տեսնել ձմեռն ամեն որ
մեր բնակրանների վառարանների վերջնական
մարելուց մի կես ժամ առաջ, յերբ ածխացած
ցախի վերջին մնացարդների տարբալուծումը
վերջացած ե լինում և ածուխի կտորները՝ բա-
ցառապես ածխածնից բաղկացած լինելով, այլևս
ընդունակ չեն բոց անելու: Նույնպես և կոքոր-
նա քարածութիւն տարբալուծման արդյունքն ե և
աղատ և ջրածնից. դրա հետեւանքով, նա յել ա-
ռանց բոցի յե այրվում, միայն մակերեսից միա-
նալով ողի թթվածնի հետ:

Ինչպիս վոր փուքսը, բարձր ծինելույզը և
առհասարակ ամեն մի միջոց, վոր ապահովում
ե թարմ ողի հոսանքը, աշխատացնում ու բոր-
բոքում ե այրման պրոցեսը, այնպես ել թարմ
ողի հոսանքը խանդարող բոլոր միջոցները նվա-
զեցնում ու մարում են կրակը: Այդ հանգաման-
քից են ողտում հրդեհները հանգցնելիս:

Հրդեհաշեջ սարքավորումները, վոր գուք
տեսնում եք քաղաքի շատ շենքերում, ածխա-

թթու գաղ արտադրելու համար հարմարեցրած փոքրիկ գործարաններ են, վոր չեն աշխատում, քանի դեռ հրղեհ չկա ավյալ չենքում։ Նրանք լին են կրաքարով կամ վորեե նման նյութով, վոր ընդունակ ե ածխաթթու գաղ արտադրելու հենց վոր վրան հեղուկ թթու ածեք, որինակ՝ աղաթթու։ Նրա վերի մասում, մի ապակյա ամանի մեջ աղաթթու յեն դնում։ Հրղեհի դեպքում բավական ե մի թեժե հարվածով կոտրել աղաթթ-վոլ լիքը սրվակը և ահա իսկույն սկսում ե աշխատել ածխաթթվի փոքրիկ գործարանը, արտադրելով առաստ ածխաթթու գաղ։ Այդ գաղը որից մոտ 1,5 անգամ ծանր լինելով, ծածկում է չենքի հատակը, և վորովհետեւ ածխաթթվի մթնոլորտում վառելանյութերը չեն կարող վառել, կրակը մարում ե, յեթե այն արդեն մեծ չափեր չի ընդունել, և շատ չի տարածվել։

Հասկանալի յէ, վոր այդ փոքրիկ սարքավորության ոգտակար կարող և լինել միայն հրդեհի սկզբնական շրջանում, յերբ նա դեռ չի համակել շենքի կամ վառելանյութի մեծ տարածություն։ Հակառակ դեպքում, այդ սարքավորման ազդեցությունը չի կարող բորբոքված հրդեհի առաջն առնել թէ՛ նրա արտադրած ածխաթթվի քանակի նվազության պատճառով և թէ՛ հրդեհի հետեւանքով ստեղծված որի հոսանքի պատճ-

ոռվ, վոր քշում, տանում և ածխաթթուն, իսկ
հրդեհին թարմ ող մատակարարում:

Հրդեհը կարելի յէ հանգչյնել այն բոլոր մի-
ջոցներով, վորոնք հնարավորություն են ընձե-
ռում խափանելու թարմ ողի մուտքն ալրպող
նյութի գտնվող տեղը։ Այդ նպատակով հրդեհ
ծագած վայրը ծածկում են թաղիքով կամ ավա-
զով, աշխատելով խափանել թարմ սովորական քր:

Զբով Հրդեհ հանդցնելն ավելի բարդ յերեւ-
լույթ է, ջուրը վոչ միայն ծածկելով այրվող
նյութը՝ խափանում և ոդի հոսանքը, այլ նա դռ-
լորշիանալով ստեղծում է այրվող նյութի շուրջը
գոլորշու մթնոլուս, վորի մեջ վառելանյութը չի
կարող այրվել: Բացի այդ, ջուրն իր մեջ «ջեր-
մունակության», նույնակա և բարձր «գոլոր-
շիացման ջերմության»*) չնորհել իջեցնում և
վառվող նյութի ջերմաստիճանը, այսինքն՝ սառ-
ցնում և նրան:

Սակայն ջրով չի կարելի համացնել Հեղուկ
յուղերի, ձեթերի, նավթային նյութերի կրակը,
գորովէնետե նրանք՝ ջրեց թեթև լինելով, յենում
են ջրի յերեսը և ավելի ևս տարածվում։ Այս
դեպքում կիրառելի յեն միայն նախորդ միջոց-
ները, վորոնք խափանում են թարմ ոգի, այժին-
քըն՝ թթվածնի հոսանքը։

*) «Զքըսունակության» և «Պոլորշչացման ջերմություն» անդամների սամինատեր մեր՝ «Վառելիքը» աշխատավորությունը: ՀԱՅ-ՀԸՊԱ 17

Ինչպես վերն ասված է, ողի զորեղ հոսանքը բորբոքում ու զորեղացնում ե կրակը, սակայն մինչև վորոշ աստիճան։ Յերբ սառն ողի հոսանքն այնքան ե սաստկանում, վոր նա սպառում ե վառելանյութի այրվելուց առաջացած ջերմության մեծ մասը, կրակը կարող ե մարել։ Այդ յերեվույթն ե տեղի ունենում, յերբ փշելով հանգնում եք ճրագը։ Պարզ է, վոր կրակը բորբոքվում ու զորեղանում ե ողի հոսանքից այն չափով, վոր չափով վոր նրա հայթայթած թթվածինը միանում ե վառելանյութի հետ, առաջացնելով կատարյալ այրման պրոցես՝ ածխածինը դարձնելով ածխաթթու և ջրածինը՝ ջրի գոլորշի։ Յերբ ողի հոսանքն այդ դրությանը հասնելուց հետո սկսում ե ավելի ուժեղանալ, նա միայն ավելարդ ող ե մուծում հնոցը, վոր առանց մասնակցելու միացման ռեակցիային, միայն տաքանում ե հնոցում ի հաշիվ առաջացող ջերմության և հեռանալով հնոցից՝ նվազեցնում ե նրա ջերմաստիճանը։ Յեկ յերբ հնոցի ջերմաստիճանն այնքան ե ընկնում, վոր այլիս չի կարող տեղի ունենալ միացման ռեակցիան, հասկանալի յե, վոր կրակը մարում է։

Հետեւապես, այրման պրոցեսում ամենաբարձր ջերմաստիճան ստանալու ամենադիմավոր պայմանն է, մատակարարել հնոցին ողի անհրաժեշտ քանակը, սակայն վոչ ավելին։ Յերբ հնո-

ցը չի ստանում ողի անհրաժեշտ քանակը, այլ՝ ման պրոցեսը մնում ե անկատար, և վառելանյութի ածխածինը հնարավորություն չունենալով ածխաթթու դառնալու, հնոցից հեռանում ե իրեւ ածխածնի ոքսիդ։ Այդ այն թունավոր գազն է, վոր կոչվում ե չափեցնող գազ, վորից մարդիկ բռնվում են, յերբ վառարանի ծինելույզը փակում են ժամանակից առաջ, կամ սենյակն են տանում զժգույն, կապույտ բոցեր անող մանղալը։ Բանը նրանումն է, վոր յեթե թթվածնի քանակությունը բավականացնում է, այսինքն՝ 3 գրամ այրվող ածուխին 8 գրամ թթվածին է հասնում, ածուխը՝ միանալով թթվածնի հետ, 11 գրամ ածխաթթու գազ և առաջացնում, իսկ յեթե ամեն 3 գրամ ածուխին միայն 4 գրամ թթվածին է հասնում, առաջանում ե 7 գրամ ածխածնի ոքսիդ թունավոր գազը, վորը ածուխի անկատար այրման արդյունքն է։ Այդ գազը գեռ կարող է այրվել, նրա 7 գրամը կարող ե միանալ 4 գրամ թթվածնի հետ և առաջացնել նույն 11 գրամ ածխաթթուն։

Հետեւապես, անկատար այրման պայմաններում, մենք վոչ միայն թունավորում ենք ողը, այլ միաժամանակ իջուր տեղը վասնում ենք վառելիքը, վորովհետեւ 1 գրամ ածուխը կատարելապես այրվելով առաջացնում է 8 կալորիէեց[#]) մի քիչ

*) Կալորիի տերմինի մասին տես մեր «Կառելիք» կ միաթառթյունը.

ավելի չերմություն, իսկ թթվածնի պակասության գեպքում, ածխածնի ոքսիդ առաջացնելով, տալիս է միայն 2,4 կալորի: Ուրեմն, յեթե հաշվի առնենք նույն 3 գրամ ածուխը, առաջին գեպքում կստանանք 24,2 կալորի, իսկ յերկրորդ գեպքում՝ իմայն 1,2 կալորի և հետեւապես, ամեն 3 գրամ ածուխի թերակատար այրման գեպքում մենք կորցնում ենք 17 կալորի: Սակայն, յեթե հավաքնենք առաջացած 7 գրամ ածուխի ոքսիդը և այդ գազը այրենք, այդ 17 կալորին չի կորչի, այլ կըստացվի իբրևի այդ գազի այրման արդյունք:

Այդ պատճառով մետալուրգիական վառարանների գազերը, վոր մեծ քանակությամբ ածխածնի ոքսիդ են պարունակում, հավաքում են և գործածում իբրևի գազային վառելունյութ:

Նույն ածխածնի ոքսիդ գազը առաջանում է կալորիդի հնոցներում. այդ պատճառով նրանց շենքերում անհրաժեշտ է մշտական ողափոխություն ապահովել՝ բանվորներին թունավորումից պատճառակով:

Վառելանյութերից շատերը, բացի ածխածնից պարունակում են բավականին նկատելի քանակությամբ ջրածնին, վորի ամեն մի գրամը վառելիս առաջացնում է 34,5 կալորի ջերմություն: Հետեւապես, այն վառելանյութը, վոր ջրածնին և պարունակում, ավելի ջերմություն պիտի առա-

ջացնի, քանի թե ածուխը: Յեվ այդպես ել ե: Բաղվի նազթի 1 գրամը, վոր մոտ 86 տոկոս ածխածնին և պարունակում և մոտ 14 տոկոս ջրածնին, առաջացնում է 10,5 կալորի ջերմություն:

Սակայն, յեթե վառելունյութը, բացի ածխածնից և ջրածնից պարունակում են նաև թթվածնին, հետեւապես նրա վառելու ընդունակ նյութի մի մասը արդեն միացած է թթվածնի հետ, ուրեմն ընդունակ և վառվելու միայն նրա թթվածնից ազատ մասը, այդ գեպքում նրա ջերմարտադրական կարողությունը. նվազում է: Իբրևի որինակ վերցնենք սպիրուը: Նրա 52 տոկոսը ածխածնից է, 13 տոկոսը ջրածնից, 33 տոկոսը թթվածնից: Հետեւապես, նրա ջրածնի մոտ մի յերրորդական մասը արդեն միացած կարելի յե համարել թթվածնի հետ: Այդ պատճառով, նրա ամեն մի դրամը արտադրում է միայն 7,4 կալորի և գո՞չ 13 կալորի, վորպիսի քանակությունը կատացվեր, յեթե սպիրուի մեջ թթվածնին ըլիներ:

Նույնը և գերա ավելին պետք է ասել նաև ցախի մասին, վորովհետեւ ցախը, բացի այն վոր թթվածնին և պարունակում, յերրեք կատարելապես չոր չի լինում: Նոյնիսկ 1-2 տարի չորացած ցախը պարունակում է մոտ 20 տոկոս ջուր: Այդ ջուրը՝ ցախը այրելիս գոլորշիանում է ի հաշվի առաջացած ջերմության, մեծ քանակությունը ջերմու-

թյուն սպառելով, վոր Փիդիկոսները անվանում են «զաղտնի ջերմություն»:

Քարածուխը նույնական վորոշ չափով ջուր և պարունակում, վոր նույն բացասական աղջեցությունն և անում, նվազեցնելով նրա ջերմարտադրական կարողությունը: Այս գեղքում բավականին նկատելի յի և մոխրի բացասական աղջեցությունը, վորովհետեւ քարածուխը բավականին մեծ քանակությամբ մոխրի և պարունակում, վորը վոչ միայն չի այրվում, այլև տաք դրության մեջ հնոցից դուրս ձգվելով, հետը տանում և վորոշ քանակությամբ ջերմություն: Յախի մասին խոսելիս մենք անուշագիր թողինք մոխրի հարցը, վորովհետեւ ցախի մոխրի քանակը համեմատաբար անհշան ե:

Բարդ վառելանյութերի, այսինքն այնպիսիների, վոր մի քիմիական տարրեց չեն բաղկացած, այլ յերկու կամ ավելի տարրեց, ջերմարտադրական կարողությունը հաշվելիս, մենք հաշվի առանք նրանց կազմող տարրերի ջերմարտադրական կարողությունը: Այլպես վարդեցինք մենք սպիրտի և ցախի վերաբերմամբ: Մինչդեռ, ինչպես առված ե այս դրայվի սկզբում, միացման ունակցիաները լինում են եքոտերմիական և ենդոտերմիական: Յեթե տվյալ վառելանյութը իր տարրերից կազմվելու, ո՞յլոյանալու համար ջերմություն և

սպառել, այսինքն ենդոտերմիական ե, իր վառվելու դեպքում այդ ջերմությունը աղատվելով, միանում է տարրերի վառելուց առաջացած ջերմությանը և տարրերի վառվելուց չափով բարձրացնում է տարրերի վառվելուց առաջացած ջերմության քանակը: Ընդհակառակը՝ յեթե տվյալ վառելանյութը դոյանալիս ջերմություն և առաջացել, այսինքն ուստիցիան եթյութերմիական յ յեղել, նրա վառվելու դեպքում նույն չափ ջերմություն պիտի սպառվի՝ նրան տարրալուծելու համար, վոր պիտի կատարվի նրա տարրերից տմեն մեկը առանձնապես այրելու համար:

Սակայն, վորովհետեւ տարածված վառելանյութերի՝ ցախի, քարածուխի, նավթի զեղքերում այդ տարրերությունը չատել մեծ չի, հաշիվը չքարդացնելու նույնական մենք այդ հարցի վրա կանոն չառանք:

Իսկ այժմ շոշափում ենք այդ հարցը հատկապես կարբողից ստացվող ացետիլեն անվանված պաղի մասին մի քանի խոսք ասելու նույնական, վանի վոր ի. Հայաստանում կարբիդ արտադրվում քանի վոր ի. Յեթե վանի գործարական է, իսկ մոտ ապագայում թե՛ Յերեվանի գործարանի արտադրությունը պիտի յոթնապատճենի, և թե՛ Ղարաբիլսայի գործարանը պիտի արտադրի մեծ կարբիդ:

Ացետիլեն դազը, բաղկացած լինելով 92,3 տո-
 կոս ածխածնից ու 7,7 տոկոս ջրածնից, պիտի մոտ
 10 կալորի ջերմություն արտադրեր, մինչդեռ նա
 13 կալորի յե տալիս ամեն մի դրամ դաշից :
 Այդ ամելորդ ջերմությունը այն ելեքտրական
 էներգիայի համագործ է, վոր սպառել ենք կար-
 բիդ արտադրելիս :

Ինչպես նյութն է հավերժական, այսինքն, վոչ
 նոր նյութ ե գոյանում և վոչ ել յերբ և իցե ան-
 հետանում ե, նա, այնպես ել էներգիան է հավեր-
 ժական : Ինչպես վոր նյութը միայն մի դրությու-
 նից անցնում ե մի ուրիշ դրություն, այնպես ել
 էներգիան, այն ելեքտրական էներգիան, վոր սպառ
 ված ե կարբուդ հնոցում, պոտենցիալ դրության
 մեջ ներկա յե ստացված կարբուդ ե նրանից ա-
 ռաջացած ացետիլեն դաշի մեջ : Ացետիլենի այս-
 ման դեպքում նա հանդես է դալիս իրեն ջերմա-
 կան էներգիա, 24 ուատ^{*)} ելեքտրական էներգիան
 համագործ լինելով 100 կալորի ջերմության :

Ցախ այրելիս մենք յետ ենք ստանում այն
 էներգիան, վոր սպառել են ծառերի տերելիները,
 ստանալով այն արեվի ճառավայթներից և դորձա-
 դրելով՝ ողի ածխաթթու գազը տարրալուծելու
 վրա, վորով նրանք սնվում են : Հենց այդ ածխա-
 թթվի անտեսանելի ածուին ե, վոր մեղ համար

տեսանելի և շոշափելի յե դառնում իբրեւ ծառերի
 բունն ու ճյուղերը կազմող նյութ : Խոկ այն եներ-
 գիան, վոր յետ ենք ստանում՝ ցախ դարձնելով և
 այլելով այդ նյութը մեր հնոցներում, այն եներ-
 գիայի համարուն ե, վոր մի ժամանակ ծառերն
 ստացել են արեվի ճառավայթներից :

Նույնը պետք ե ամեն տեսակի քարա-
 ծույների մասին, վոր ինչպես հայտնի յե, գոյա-
 ցել են մեղանից հազարավոր դարեր առաջ աճած
 ծառերից ու բույսերից : Նույն ե և տորիքը :

Ուրեմն վասելանյութը այրելիս մենք ողտա-
 գործում ենք այն եներգիան, վոր մի ժամանակ
 սպառված ե այդ նույն վասելանյութը ստեղծելու,
 դոյցնելու համար : Միաժամանակ մթնոլորտին
 վերադարձնում ենք՝ այն ժամանակ նրանից փոխ
 առած ու տարրալուծած ածխաթթուն :

Մի կողմից ծառերի կանաչ մասերը, գլխա-
 վորապես տերելիները, սպառում են մթնոլորտի ած-
 խաթթուն, յուս կողմից՝ այսման պրոցեսները,
 կենդանիների չնչառությունը, փոռվն ու նեխումը
 և այլն ածխաթթու յեն հայթայթում մթնոլորտին :
 Այդ պատճառով, մեծ քաղաքների ու գործարանա-
 յին ըջանների ողը ավելի հարուստ ե ածխաթթ-
 վով, քան թե անտառախիտ վայրերի ողը : Սակայն
 մթնոլորտը կայուն ու սառած միջավայր չի . նրա
 ներքին շերտը, վոր մոտ ե յերկրադնդի մակերե-

*) Ուատը կելուատի մի հազարերորդ մասն ե,

սին, մշտական շարժման մեջ է: Ողի հոսանքները, քամին անդադար խառնելով մթնոլորտի այն խավը, վոր անմիջապես պարուցում և յերկրագունդը, մեծ քաղաքների ողը խառնում են սահմանի անտառների ու կանաչ գաշտերի ողին և այդպիսով ապահովում են մթնոլորտի համարյա թե փոփոխության չենթարկող միջին կազմը, վորի մեջ ածխաթթվի քանակը կազմում է 10.000-ից մոտ 3-ը ըստ ծավալի:

Հաշվի առնելով յերկրագունդը շրջապատող մթնոլորտի ահագին քանակությունը, նրա ածխաթթվի այդ չնչին տոկոսը ($0,03$ տոկոս)¹², մոտ յերկու միլիոն անգամ միլիոն տոնն և կազմում ($2 \cdot 10^{12}$ տոնն), իսկ ածուխի քանակը այդ գաղային ովկիանոսի մեջ՝ մոտ կես միլիոն անգամ միլիոն տոնն:

Ամփոփենք մեր ասածները այրման պրոցեսի մասին:

1. Այրման պրոցեսը միացման ռեակցիա յեղանակական տարրերը, միանալով թթվածնի հետ, առաջացնում են գլխավորապես ածխաթթու գազ և ջրի գուրգի:

2. Այրման պրոցեսները մեծ մասամբ եքուտերմիական են, այսինքն չերմություն են առաջանալու մում:

3. Այրման պրոցեսից հնարավորին չափ բարձր

եֆեկտ (արդյունք) ստանալու նպատակով՝ հնուցին ակետք է մատակարարել ողի անիրածեցու, սակայն քալարար քանակի: Ողի ողակասության դեպքում՝ անկատար այրման հետեւանքով վառելանյութը չի արտադրում իր պոտենցիալ եներգիայի ամբողջությունը, իսկ ողի առատության դեպքում, անհրաժեշտ քանակից ավելի մուծված ողը, տաքանալով հնոցում ի հաշիվ վառելիքի ջերմության, անոգուած կերպով ջերմություն և դուրս տանում հնոցից:

4. Հնոցը պետք է շինել ջերմության վատ հաղորդիչ նյութերից. Հակառակ դեպքում ջերմահաղորդության հետեւանքով տեղի յէ ունենում կարորիաների անողությունը. Իզուր տեղը շրջակա ողն ու առարկաներն են տաքանում: Այդ եղանակով, վոր սենյակի յերկաթե վառարանները շատ շոտ են տաքացնում սենյակը, սակայն և սառում են շուտով, վորովհետեւ յերկաթը լավ հազրողիչ ե, բայց միաժամանակ զուրկ ե բարձր «ջերմությանակությունից»*):

5. Բոցը՝ շիկացած գաղ ու չողի յեւ պինդ նյութերը, վոր զազ ու չողի չեն առաջացնում, բոց չեն անում. Նրանք այրվում են առանց բոցի, ինչպես մաքուր ածուխը, յերկաթը և մագնիումը:

*) «Ջերմունակություն» տերմինը բացատրված է մեր «Վառելիքը» աշխատության մեջ:


**Շիկացած դավն ու շոգին լույս չեն արձաւ-
կում : Բոցի լույսը առաջանում է նրա մեջ ներկա
պինդ նյութերից :**

7. Հրդեհը հանդցնելու համար պետք է խա-
փանել ողի հոսանքը, այսինքն կրակը դրկել ան-
հրաժեշտ թթվածնից, առանց վորի վառելանյութը
չի կարող այրվել :

8. Հեղուկ վառելանյութի հրդեհը չի կարելի
հանդցնել ջրով, վորն այնքան ազդու յե ոլինդ մար
մինհերի կրակը հանդցնելու դեպքում :

9. Բնության մեջ այլման պրոցեսը հավեր-
ժական հներդիտայի հավիտենական շրջանառության
անվերջ շղթայի ողակներից մակար գույն գույն գույն







ԳԻՒԲ 10 Կ. (1 Ա.)

Инж. М. Я. АНДРЕАСЯН
ЧТО ТАКОЕ ГОРЕНIE

Госиздат ССР Армении
Эривань—1931

«Ազգային գրադարան»



NL0252879

